600.0248.22.07.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

22 հուլիսի 2020 թվականի №248Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՈՒԴԻՏԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի «է» ենթակետը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման №0092 լիցենզիայի պայմանների 43-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ներդրումային գործունեության (իրականացված կապիտալ ծախսերի) տեխնիկական աուդիտի ծրագիրը և ժամանակացույցը համաձայն՝ №1 և №2 հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ.
   1) աուդիտորական ծառայություններ մատուցողի ընտրությունն իրականացվում է միջազգային մրցույթով.
   2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը աուդիտորական ծառայությունների ձեռքբերման մրցույթի հայտարարությունը և սույն որոշման №1, №2 հավելվածները հրապարակում է հայերեն և անգլերեն տարբերակներով.

3) սույն որոշման №2 հավելվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը անհրաժեշտ է ամրագրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության և մրցույթում հաղթող ճանաչված աուդիտորի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրում.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը աուդիտորական ծառայությունների համար աուդիտորին վճարում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հանձնարարականի հիման վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
22 հուլիսի 2020 թ.